ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցութ ՀՀ Շիրակի մարզի «Անուշավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի և ԹԳՀԳ-ի ուսուցչի /7 դասաժամ/ և երգ երաժշտության ուսուցչի /3դասաժամ/ թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի :
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում /Ձեվ 1/
-մեկ լուսանկար 3x4չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/ ,
-անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն /Ձեվ 5/,
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավատող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
-որակավորման տարակարգ ունելու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2025թ. սեպտեմբերի 2- ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 14:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2025թ սեպտեմբերի 5-ին՝ ժամը 12:00-ին , ՀՀ Շիրակի մարզի <<Անուշավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գ. Անուշավան, 7-րդ փողոց, շենք 23 :
Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 33 42 70 հեռախոսահամարով: